ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԵՊՀ ռեկտոր Հ. Վ. Հովհաննիսյան
«____» _____ 2026 թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Լյուբով Վալերիի Բալյանի «Սևանա լճի ավազանի և Արաքս գետի հովտի ջրլող և ափամերձ թռչնաֆաունայի տարածաժամանակային վերաբաշխումը՝ կապված Սևանա լճի ջրի մակարդակի փոփոխության հետ» թեմայով ատենախոսության վերաբերյալ, որը ներկայացված է Գ.00.08 «Կենդանաբանություն, մակաբուծաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Ներկայացված ատենախոսությունը նվիրված է Հայաստանի երկու կարևոր ջրային համակարգերում՝ Սևանա լճի ավազանում և Արաքս գետի հովտում, ջրլող թռչունների ֆաունայի տարածաժամանակային դինամիկայի համապարփակ ուսումնասիրությանը: Աշխատանքը կատարված է գիտական բարձր մակարդակով և հիմնված է երկարամյա դաշտային դիտարկումների, գրական աղբյուրների մանրակրկիտ վերլուծության և ժամանակակից վիճակագրական մեթոդների կիրառման վրա:

Աշխատանքի արդիականությունը

Ատենախոսության թեման արդիական է՝ պայմանավորված Սևանա լճի հիդրոլոգիական ռեժիմի փոփոխություններով, խոնավ տարածքների կրճատմամբ, ինչպես նաև գլոբալ և տարածաշրջանային կլիմայական փոփոխությունների և մարդածին ճնշման աճով: Ջրլող թռչունները արդարացիորեն դիտարկվում են որպես ջրային էկոհամակարգերի վիճակի կարևոր կենսացուցիչներ և կենսաբազմազանության պահպանման առանցքային տարրեր:

Աշխատանքի կառուցվածքը

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, վեց գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ներկայացված է 145 էջի վրա, ներառում է 35 նկար և 22 աղյուսակ:

Գիտական նորույթը

Ատենախոսությունը պարունակում է էական գիտական նորույթ, որը դրսևորվում է ջրլող և կիսաջրային թռչունների ֆաունայի երկարաժամկետ դինամիկայի առաջին համապարփակ վերլուծությամբ, նախկինում անհասանելի

սահմանային գոտիների ուսումնասիրությամբ, ինչպես նաև պահպանության միջազգային չափորոշիչների ինտեգրմամբ և վիճակագրական մշակմամբ:

Տեսական և գործնական նշանակությունը

Հետազոտությունների արդյունքում ստացվել է ջրլող թռչունների ֆաունայի վերաբերյալ լայնածավալ, համակարգված և գիտականորեն հիմնավորված տվյալների շտեմարան: Առանձնահատուկ արժեք ունեն Արաքս գետի նախկինում սահմանափակ ուսումնասիրված հատվածներում կատարված դիտարկումները, ինչպես նաև կլիմայական և մարդածին գործոնների քանակական գնահատումը: Ստացված արդյունքները կարևոր նշանակություն ունեն տարածաշրջանային կենսաբազմազանության պահպանման, ջրային տարածքների կառավարման և ՀՀ Կարմիր գրքի թարմացման գործընթացների համար:

Հետազոտության արդյունքները զգալիորեն համալրում եմ Հայաստանի թռչնաֆաունայի վերաբերյալ առկա տվյալները և կարող են արդյունավետորեն կիրառվել ջրային տարածքների կառավարման ծրագրերում, բնապահպանական մշտադիտարկման համակարգերում, որսի սահմանափակումների գիտական հիմնավորման, ինչպես նաև ազգային և միջազգային բնապահպանական հաշվետվությունների պատրաստման ընթացքում:

Կապը մանակավարժության և գիտության համապատասխան ճյուղերի հետ

Ատենախոսությունում ներկայացված տվյալները կարելի է օգտագործել «Կենդանաբանություն», «Ողնաշարավորների կենդանաբանություն», «Օրնիտոլոգիա», «Կենդանիների էկոլոգիա և պահպանություն», «Կլիմայի փոփոխության ազդեցությունը կենդանական աշխարհի վրա» և այլն առարկաների դասավանդման ընթացքում:

Ատենախոսության նյութերը լիովին արժանի են հրապարակման առաջատար միջազգային գիտական հանդեսներում, ինչպիսիք են *Biological Conservation*, *Journal of Ornithology* և *Wetlands* ամսագրերում:

Աշխատանքի բովանդակությունը

Հետազոտությունների մեթոդաբանությունը հիմնված է 1920-ական թվականներից մինչև 2024 թ. ընդգրկող գրական տվյալների վերլուծության, ինչպես նաև հեղինակի շուրջ 24 տարվա դաշտային աշխատանքների արդյունքների վրա: Կիրառվել են թռչունների հաշվառման ժամանակակից մեթոդներ, քարտեզագրում և վիճակագրական մշակման ստանդարտ գործիքներ՝ միջազգային չափորոշիչներին (AEWA, IUCN) համապատասխան:

Ատենախոսության առաջին գլխում ներկայացված է Սևանա լճի ավազանի և Արարատյան դաշտի ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը, ինչպես նաև Հայաստանում ջրլող թռչունների ուսումնասիրման պատմական ակնարկը: Վերլուծվում են թռչնաբանական հետազոտությունների հիմնական փուլերը՝ սկսած

XVIII դարից մինչև մեր օրերը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ջրային համակարգերի մակարդակի փոփոխությամբ և մարդածին ազդեցությամբ պայմանավորված էկոհամակարգային փոփոխություններին: Հիմնավորվում է թեմայի արդիականությունն ու համակողմանի հետազոտության անհրաժեշտությունը:

Գլուխ 2-ը նվիրված է հետազոտության ընթացքում կիրառված նյութերի և մեթոդների նկարագրությանը: Հիմքում դրված են հեղինակի բազմամյա դաշտային ուսումնասիրությունները (2000–2024 թթ.), ինչպես նաև գրական աղբյուրների տվյալները՝ ընդգրկելով 1920–2024 թվականները: Ներկայացված են թռչունների թվաքանակի և տեսակային կազմի հաշվառման մեթոդները: Տվյալների մշակման համար կիրառվել են ժամանակակից վիճակագրական և մոդելավորման մեթոդներ՝ համապատասխան միջազգային բնապահպանական չափորոշիչներին:

Ատենախոսության 3-րդ գլխում վերլուծվում են ջրլող թռչունների տեսակային կազմի և տարածական կառուցվածքի փոփոխությունները XX դարում: Ցույց է տրվում Սևանա լճի ջրի մակարդակի նվազման և ճահճային տարածքների չորացման բացասական ազդեցությունը բնադրող տեսակների վրա: Ընդգծվում է Արարատյան դաշտի ձկնաբուծական տնտեսությունների փոխհատուցող դերը տարածաշրջանի թռչնաֆաունայի պահպանման գործում:

Գլուխ 4-ում ներկայացվում է ջրլող և ափամերձ թռչունների ժամանակակից վիճակի մանրամասն վերլուծությունը՝ հիմնված 2000–2024 թթ. տվյալների վրա: Քննարկվում են ձմեռող, բնադրող և միգրացիոն տեսակների սեզոնային առանձնահատկությունները: Առաջին անգամ ներկայացվում են Արաքս գետի միջին հոսանքի սահմանային հատվածներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները:

Գլխուխ 5-ում ներկայացված է Սևանա լճի ավազանի և Արարատյան դաշտի ջրաճահճային թռչնաֆաունայի կառուցվածքային փոփոխությունների համեմատական վերլուծությունը: Ցույց է տրվում, որ մարդածին գործոնները տարբեր ժամանակահատվածներում ունեցել են ինչպես բացասական, այնպես էլ փոխհատուցող ազդեցություն: Նշվում է XXI դարում Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման արդյունքում որոշ բնադրող տեսակների թվաքանակի վերականգնումը: Բացահայտվում են թռչունների տարածական վերաբաշխման ժամանակակից միտումները:

Գլուխ 6-ը նվիրված է ջրլող և ափամերձ թռչունների թվաքանակի և տարածաժամանակային բաշխման վրա ազդող բնական և մարդածին գործոնների վերլուծությանը: Քննարկվում է կլիմայական պայմանների, հիդրոլոգիական ռեժիմի և ջրային մակերեսների սառեցման ազդեցությունը: Ներկայացվում է նաև տնտեսական գործունեության, որսի և կենսամիջավայրերի փոփոխության նշանակալի դերը:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ձմեռող պոպուլյացիաներին՝ որպես էկոլոգիական փոփոխությունների զգայուն ցուցիչներ:

Ատենախոսությունն ընդհանուր առմամբ բնութագրվում է բարձր գիտական մակարդակով, սակայն աշխատանքի վերաբերյալ առկա են որոշ դիտողություններ:

Դիտողություններ

1. Տեսակների քանակական տվյալների համադրելիություն – Տարբեր ժամանակահատվածների (1920–2000 թթ., 2000–2024 թթ.) համար ներկայացված տեսակային կազմի թվաքանակները որոշ տեղերում պահանջում են լրացուցիչ հստակեցում՝ հատկապես Սևանա լճի ավազանի և Արաքս գետի հովտի տվյալների համեմատական մեկնաբանության տեսանկյունից. Գլուխ III-ում (էջ 36) նշվում է, որ 1920–2000 թվականներին Սևանա լճի ավազանում գրանցվել են ջրլող թռչունների 109 տեսակ (9 կարգ, 19 ընտանիք). ցանկալի կլիներ հստակեցնել՝ արդյոք տվյալը վերաբերում է միայն Սևանա լճի ավազանին: Միաժամանակ, Գլուխ IV-ում (էջ 49) նշվում է, որ Սևանա լճի ավազանի և Արաքս գետի հովտի ճահճուտներում «պատմականորեն» գրանցվել են 127 տեսակ, իսկ հեղինակի դաշտային դիտարկումների հիման վրա (2000–2020 թթ.) նույն տարածքներում նշվում է 118 տեսակ, մինչդեռ եզրակացություններում նշված է 2000–2024 թթ. ժամանակահատվածը: Նշված թվային տվյալների և ժամանակագրական շրջանակների միջև առկա որոշ անհամապատասխանությունները, ինչպես նաև Արաքսի հովտում առաջին անգամ գրանցված՝ երկրի համար նոր տեսակների կարգավիճակը, պահանջում են լրացուցիչ հստակեցում:
2. Նոր տեսակների կարգավիճակի պարզաբանում – Ցանկալի կլիներ առավել հստակ ներկայացնել Արաքս գետի հովտում 2000-ական թվականներին առաջին անգամ գրանցված տեսակների կարգավիճակը՝ առանձնացնելով Հայաստանի Հանրապետության ֆաունայի համար նոր տեսակները և դրանք հիմնավորելով համապատասխան աղբյուրներով:
3. Մեթոդաբանական նկարագրության ընդլայնում – Տեքստում ցանկալի կլիներ լրացուցիչ հստակեցնել մի շարք մեթոդաբանական մանրամասներ, մասնավորապես՝ արդյոք հաշվառման երթուղիները (տրանսեկտները) եղել են տարեցտարի հաստատուն, թե դրանց դիրքերը փոփոխվել են, ինչպես նաև՝ արդյոք յուրաքանչյուր դիտակետի համար ֆիքսվել է հաշվառման իրականացման ժամանակը՝ թռչունների օրական ակտիվության հետ կապված հնարավոր սխալները նվազագույնի հասցնելու նպատակով: Նշված մանրամասների ընդգրկումը կբարձրացնի մեթոդաբանական բաժնի ամբողջականությունը:

4. Տվյալների ներկայացման ձևաչափ – Առանձին աղյուսակներում և նկարներում (մասնավորապես տոկոսային հարաբերությունների և գրաֆիկական նշումների դեպքում) անհրաժեշտ են փոքր ճշգրտումներ և պարզաբանումներ, որոնք կդյուրացնեն նյութի ընկալումը: Մասնավորապես, Նկար 4-ում (էջ 14) դեղին սյունակի նշանակությունը չի պարզաբանվում: Աղյուսակ 4-ում, գերիշխող և հազվագյուտ տեսակների առավել ընկալելի ներկայացման նպատակով, նպատակահարմար կլիներ ներառել ամբողջ դիտարկման ժամանակահատվածի համար թվաբանական միջինի և/կամ միջինի սխալի վերաբերյալ ցուցանիշներ, ինչը հնարավորություն կտար ընթերցողին ավելի արագ գնահատել պոպուլյացիայի կառուցվածքը: Բացի այդ, հավելվածներում բոլոր օգտագործված հապավումները պետք է ամբողջությամբ բացատրված լինեն, իսկ տեսակների գիտական անվանումները (Genus species) ներկայացված լինեն շեղատառով՝ միջազգային ընդունված ստանդարտներին համապատասխան:
5. Պահպանման առաջարկությունների զարգացում – Ցանկալի կլիներ առավել մանրամասն անդրադառնալ այն տեսակների կառավարման հնարավոր միջոցառումներին, որոնց պոպուլյացիաների աճը կարող է բացասաբար ազդել այլ, այդ թվում՝ հազվագյուտ տեսակների վրա:
6. Առկա են որոշ վրիպակներ, տեխնիկական բնույթի թերություններ:

Վերոնշյալ դիտողությունները չեն նսեմացնում աշխատանքի ընդհանուր գիտական արժեքը և կարող են դիտարկվել որպես առաջարկություններ՝ ուղղված հետազոտության հետագա ամրապնդմանն ու զարգացմանը:

Եզրակացություն

Լյուբով Վալերիի Բալյանի «Սևանա լճի ավազանի և Արաքս գետի հովտի ջրլող և ափամերձ թռչնաֆաունայի տարածաժամանակային վերաբաշխումը՝ կապված Սևանա լճի ջրի մակարդակի փոփոխության հետ» ատենախոսությունը ավարտուն, ինքնուրույն և գիտականորեն հիմնավորված հետազոտություն է, որն առանձնանում է արդիականությամբ, գիտական նորույթով և բարձր գործնական արժեքով:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունն արտացոլված են ատենախոսության սեղմագրում, ինչպես նաև հրատարակված 3 հոդվածներում և 3 գիտաժողովների նյութերում:

Եզրակացությունները տրամաբանորեն բխում են աշխատանքի նպատակից և առաջադրված խնդիրներից:

Աշխատանքը լիովին համապատասխանում է ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին, իսկ հեղինակը՝ Լյուբով Վալերիի Բալյանը, արժանի է կենսաբանական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանի շնորհմանը:

Աշխատանքը քննարկվել է հունվարի 21-ին տեղի ունեցած կենդանաբանության ամբիոնի թիվ 8 արտահերթ նիստում, որին ներկա էին, ամբիոնի վարիչ՝ կ.գ.թ., դոցենտ Ա. Ս. Ղազարյանը, կ.գ.դ., պրոֆեսոր Մ.Ս.Առաքելյանը, կ.գ.թ, դոցենտ Գ.Յ. Պապովը, կ.գ.թ. ասիստենտներ՝ Թ.Կ. Հարությունյանը, Մ.Վ. Արզումանյանը, ասպիրանտներ՝ Մ.Վ.Ասիկյանը, Ա.Ա. Ղոմաջյանը, ավագ լաբորանտներ՝ Օ.Ա. Ելաբեկյանը, Գ. Հ. Սահակյանը:

Կենդանաբանության ամբիոնի վարիչ՝
կ.գ.թ, դոցենտ *Ա.Ս. Ղազարյան*

«Ա.Ս. Ղազարյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ»
կենսաբանության ֆակուլտետի գիտքարտուղար,
կ.գ.թ, դոցենտ *Ի.Վ. Շահազիզյան*

ԵՊՀ գիտքարտուղար
բ.գ.թ., դոցենտ *Մ.Վ. Հովհաննիսյան*

26.01.26թ.